Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 139 - Ա որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր
«ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԻ ՀՐԱՆՏ ՎԱՐԴԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻՆ ՀԱՐԱԿԻՑ ՄԱՅԹԵՐԻՆ ՏՆԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԾԱՌԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ ԵՎ ՏՆԿՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետության Արարատի մարզում գտնվող Մասիս քաղաքի Հրանտ Վարդանյանի անվան փողոցին հարակից մայթերին տնկելու համար ծառերի ձեռքբերում և տնկում՝ նվիրաբերման նպատակով
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ակնկալվում է ծրագրի շրջանակներում օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Հրանտ Վարդանյան փողոց 6, ՀՎՀՀ՝ 02269952)
4.	Ծրագիրը կատարողը	«Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Հրանտ Վարդանյան փողոց 6, ՀՎՀՀ՝ 02269952)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ, Արարատի մարզ, ք. Մասիս, Հրանտ Վարդանյան փողոց քաղաքաշինական բնագավառ:
6.	Ծրագրի բյուջեն	60 000 000,00 (վաթսուն միլիոն) ՀՀ դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Մասիսի համայնքապետարան
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2022 թվականի փետրվարի 21-ից մինչև 2022 թ. հունիսի 01-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել թվով 300 հատ “Robinia Margaretta “Casque Rouge” ծառերի ձեռքբերման, ներմուծման և ք. Մասիս, Հրանտ Վարդանյան փողոցին հարակից մայթերին տնկման աշխատանքներ: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 60 000 000,00 (վաթսուն միլիոն) ՀՀ դրամ:

		Միջոցառումը նախատեսվում է իրականացնել 2022 թվականի փետրվարի 21-ից մինչև 2022 թ. հունիսի 1-ն ընկած ժամանակահատվածում:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Տվյալ ծրագրի շրջանակներում նախատեսվում է ներմուծել թվով 300 հատ “Robinia Margaretta “Casque Rouge” ծառեր և տնկել ք. Մասիս, Հրանտ Վարդանյան փողոցին հարակից մայթերին: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 60 000 000,00 (վաթսուն միլիոն) ՀՀ դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավար-ման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Չի նախատեսվում:
13.	Ծրագրի արդյունավետու-թյան նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից: Հայաստանի Հանրապետության Կառավարության 2003 թ.-ի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 25-րդ կետով սահմանված կարգով հաշվետվությունների ներկայացում լիազորված մարմնին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

01.03.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ